

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՎ ԻՐԱՎԱԾ ԱԿԱԳԻՄԻԿԱՍ ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ

1998 թ. հունիսի 10—11-ը տեղի ունեցավ Մաշտոցի անվան Մատենադարանի 29-րդ գիտական նստաշրջանը: Այն նվիրված էր ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանի ծննդյան 80-ամյակին:

Նստաշրջանը սկսվեց Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Սեն Արևշատյանի «Լ. Խաչիկյանի կյանքը և գործը» բացման խոսքով, որում շեշտվեց հատկապես այն իրողությունը, թե Խաչիկյանի մուտքը հայագիտության աշխարհ նշանավորվեց Եղիշեի «Արարածոց մեկնությունը» նվիրված և բարձր գնահատության արժանացած թեկնածուական ատենախոսությամբ, որում արդեն իսկ երևում էր երկտասարդ գիտնականի հետաքրքրությունների լայն շրջանակը: Անցնող տարիներին ընթացքում այն առավել էր ընդլայնվելու միջնադարյան Հայաստանի գրչության ու հոգևոր կենտրոններին, գիտական մտքին և սոցիալ-տնտեսական հարաբերություններին նվիրված ուսումնասիրություններով և բնագրերի հրատարակություններով, որոնց բարձրակետը դարձան XIV—XV դդ. հայկական ձեռագրերի հիշատակարանների հրատարակության շրջանում հատկապես Վահագնյանի «Ստեփանոս Սուրբի» թողած հայագիտական այս ժառանգությանը պետք է գումարել նաև այն սեծ գիտակազմակերպչական աշխատանքը, որ նա կատարեց որպես Մատենադարանի տնօրեն՝ մինչև կյանքի վերջին օրերն էլ կապված մնալով հայ ձեռագրաչին աշխարհին:

Ամփոփելով խոսքը, Սեն Արևշատյանն ասաց, որ ոչ միայն կենդանի է Լևոն Խաչիկյանի հիշատակը, այլև իր կենդանի ներկայությունն ենք զգում այսօրվա գիտական կյանքում, քանի որ առանձին հատորներով հաջորդաբար հրատարակվում են տարբեր տարիներին տպագրված նրա հոդվածներն ու տակավին անտիպ մնացած գործերը:

Լևոն Խաչիկյանը շարունակ հետաքրքրվելով Մատենադարանի աշխատակիցների գիտական հետազոտությունների ընթացքով, արժեքավոր դիտողություններ էր կատարում, հայ ձեռագրաչին աշխարհի իր վարմանալի իմացությամբ հուշում էր, թե տվյալ թեմայի վերաբերյալ որ ձեռագրում ինչ կարելի է գտնել և այս իրողությունը երախտագիտությամբ քանիցս շեշտվեց գիտաժողովում կարգացված զեկուցումների ժամանակ:

Առաջին զեկուցումը՝ «Նարեկացիագիտության վերելքը XV դարում», որի հեղինակն էր Մատենադարանի ավագագույն գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Շուշանիկ Նազարյանը, նվիրված էր այն հարցին, թե լուսավորական շարժմամբ սկզբնավորված գրական նոր գործընթացում ինչպես է նորովի արժևորվում ու վերաիմաստավորվում նարեկը:

Բ. գ. թ. Հրաչյա Թամրազյանի «Բանաստեղծական արվեստի խնդիրները Գրիգոր Նարեկացու «Մատյանում» զեկուցման մեջ ներկայացվեց, թե թեմատիկ գեղարվեստական ինչ միջոցներով է նարեկացու կողմից շեշտվում Մատյանի հարակալության և հեղինակի մահից հետո գործի հարատևելու գաղափարը:

«Ստեփանոս Սուրբուհու եկեղեցարանական ժառանգությունը» զեկուցման մեջ Բ. գ. թ. Հակոբ Քյոսեյանը VIII դարի մեծանուն մատենագրի երկերի հիման վրա բացահայտեց, վերլուծեց ճարտարապետական և ժեսակական խորհրդանշանի աստվածաբանական ակունքները, առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Պ. գ. թ. Գևորգ Տեր-Վարդանյանը «Հուգո Սուրբ-Վիկտորցու ժամանակագրության հայերեն թարգմանությունը» զեկուցման մեջ ընդգծելով, որ սա հայերեն թարգմանված մեզ հայտնի առաջին պատմագրական հուշարձանն է, և ներկայացնելով հիշյալ երկի մասին բանասիրության մեջ մինչ այժմ եղած հիշատակություններն ու կարծիքները, այս գործի վեներական ձեռագրի ըստացված լուսապատճենի հիման վրա կազմում է քննական բնագիրը և գրության հեղինակին,

հայերեն թարգմանչին ու թարգմանությունը վերաբերող մի շարք վարկեր ճշգրտումներ կատարում:

Մատենադարանի գիտաշխատող Հովիկ Հայրապետյանի «Ս. Էջմիածնի մեծ երախտավոր և գրի, Գրիգոր Զալալբեկյան կաթողիկոսը՝ զեկուցման մեջ ձեռագրային և հիշատակարանային փաստերի վկայակցմամբ ցույց է տրվում, որ Կիրակոս Վիրապեցուն հաջորդած Գրիգոր Զալալբեկյան կաթողիկոսը ոչ միայն նշանավոր եկեղեցական ու ժամանակի լավ կրթված գործիչներից մեկն էր, այլև հմուտ ծաղկող ու գրիչ և ներկայացնում է Զալալբեկյանի ձեռքով ընդօրինակված ու նկարագրողված ձեռագրերը:

Պ. Գ. թ. Արծրուն Սահակյանի «Շուշանիկի վկայաբանությունը» զեկուցումը նվիրված էր V դարի այս վկայաբանության հայկական բնագրի և վրացական խմբագրության համեմատական բնութայնը և վերականգնմանը այն նախօրինակի, որի հիման վրա ստեղծվել է նախ հայկականը, ապա և վրացական տարբերակը:

Մատենադարանի գիտաշխատող Արամ Թովչյանի «Փիրմիլիանոսն իբրև Մովսես Խորենացու աղբյուր» զեկուցումը նվիրված էր Խորենացու «Պատմության» վիճահարույց հատվածներից մեկին (Բ, 75), որի համար որպես աղբյուր Պատմաճյուր Պատմաճյուր հիշատակում է Կապադովկյան Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսի «Պատմությունը»: Հակառակ հայագիտության մեջ իշխող կարծիքի, Ա. Թովչյանը մատենագրական վկայություններով փորձեց ցույց տալ, որ Խորենացին ձեռքի տակ իբրև ունեցել է Փիրմիլիանոսի մի գրվածք, իսկ Ալեքսանդրիայի եպիսկոպոս Պետրոսի նահատակության մասին հիշատակությունը նա վերցրել է ուրիշ աղբյուրից և թյուրիմացաբար վերագրել Փիրմիլիանոսին:

Մատենադարանի գիտաշխատող Լուսիկ Ստեփանյանի «Վկայակոչումների համակարգը Բարադալի և Հովասափի պատմության հայերեն թարգմանության մեջ» զեկուցումում ներկայացրել են բնագրային այն միտոսությունները, որոնք կատարվել են հայերեն թարգմանության ընթացքում թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ խմբագրություններում, հայերեն թարգմանությունը ենթարկելով որոշակի տեղայնացման, որը պայմանավորված էր այն հայ ընթերցողին առավել մատչելի դարձնելու նպատակով և որոշակի դավանաբանական նկատառումներով:

«Փիրուն Ալեքսանդրացու բնագրերի կիրառության շրջանակները միջնադարյան Հայաստանում» զեկուցման մեջ Սրեանի պետական համալսարանի աշխատակից Օլգա Վարդադարյանը ներկայացրեց Փիրունի երկերի հայերեն թարգմանությունը պարունակող ձեռագրերի բաշխվածությունը ըստ միջնադարյան Հայաստանի դպրոցական կենտրոնների, որոնց հիման վրա վերլուծում է Փիրունյան բնագրերի տարածվածության աստիճանը միջնադարյան Հայաստանում:

Պ. Գ. Գ. Վարդան Գրիգորյանի զեկուցումը նվիրված էր լեզվաբանության Կաստանյա Պոտոցկայայի կողմից Տիսմենիցա ավանի հայերին 1689 թ. շնորհած հրովարտակին, որով տեղի հայերը ստացել էին դատական ինքնավարության իրավունք և մի շարք արտոնություններ: Ցույց է տրվում, թե Տիսմենիցայի հայերի կյանքում ինչ մեծ դեր է խաղացել մագաղաթի վրա գրված և հետագայում մի քանի անգամ վերահրատարակված այս հրովարտակը, որը Վ. Գրիգորյանի քննարկումով 1962 թ. բերվել է Մատենադարան և այժմ ցուցադրվում է ցուցասրահի նյութերի շարքում:

Պ. Գ. Բ. Արտաշես Մաթևոսյանը ներկայացրեց Հեթումի Ճաշոցին (ձեռ. 979) նվիրված իբրև ուսումնասիրություն:

Պ. Գ. թ. Մհեր Պապյանի «Բողոքյան գրադարանի հայերեն ձեռագրերը» զեկուցումը նվիրված էր Ռոսֆորդի համալսարանի գրադարանի շուրջ երկու տասնյակ այն ձեռագրերի նկարագրությանը, այդ թվում և Հակոբ Զուղայեցու ու Սարգիս Մոկացու նկարագրող ձեռագրերին, որոնք գիտական շրջանառությունից դուրս են մնացել, բանի որ գրադարանը դրանք ստացել է 1918 թ. Ձեռագրադրուցակի հրատարակությունից հետո:

Ֆիդ. մաթ. Գ. Բ. Զուլյա էյնաթյանը «Հայ աստղագիտության ակունքների մասին» զեկուցման մեջ նյութական մշակույթի նմուշների, պաշտամունքային առարկաների և հայկական ձեռագրերի առանձին վկայությունների ու տոմարագիտական աշխատանքների զուգարկական համեմատությունների հիման վրա անդրադառնում է հայ աստղագիտության սկզբնավորման ու հարևան ժողովուրդների աստղագիտական ըմբռումների հետ ունեցած ընդհանրությունների հարցերին:

Բժշկ. Գ. Գ. Ստեփան Վարդանյանը «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերը Տիեպոլոյի «Ձոր աշխարհամասերը» որմնակարում» զեկուցման մեջ ցույց է տալիս, որ իտալացի աշխարհահռչակ

վարպետ Տիեպուրն այս որմնանկարում (կուցրուրգի եպիսկոպոսարան, 1753) Ասիական աշխարհամասում պատկերել է Մեսրոպ Մաշտոցին և հայոց այբուբենը, վերջինիս համար նախօրինակ ունենալով 1690 թ. ամստերղամյան հայերեն մի հրատարակության մեջ զետեղված հայկական այբուբենը:

Արվեստագիտության դոկտոր էմմա Կորիսմազյանը «Քորոս Ռոսլինի նորահայտ մանրանկարի մասին» զեկուցման մեջ ցույց է տալիս, որ 1295 թ. Դրազարկում գրված և այժմ Մատենադարանում պահվող հմր 6290 ձեռագրի սկզբում եղող մանրանկարը փակցվել է հետագայում և հեղինակն է Քորոս Ռոսլինը: Քննվում է նաև, թե ովքեր են նկարում պատկերված պատվիրատուները:

«Ջարբրիա Ավանցու ձեռագրական ժառանգությունը» զեկուցման մեջ Մատենադարանի գիտաշխատող Ավետ Ավետիսյանը տարրեր ձեռագրացուցակների հիշատակարանային և ձեռագրական տվյալների հիման վրա ներկայացնում է Ավանցու ընդօրինակած և ծաղկած ձեռագրերի մատենագիտությունը, դրանց թիվը հասցնելով քսանչորսի: Լուսարանված են նաև Ավանցու կենսագրության տարրեր դրվագները:

Գիտաժողովի վերջին զեկուցումը՝ «10-րդ դարի անհայտ ձեռագրի նորահայտ մասունք», որի հեղինակն էր արվեստագիտության թեկնածու Աստղիկ Գևորգյանը, նվիրված էր էջմիածնի Ավետարանին: Վերջինիս և Մատենադարանի հմր 5027 ձեռագրի պահպանակի խորանների զարդամոտիվների, գունային լուծումների, ինչպես նաև ձեռագրի ու թանաքի ակնհայտ նմանության հիման վրա Ա. Գևորգյանը եզրակացնում է, որ դրանց հեղինակը ևս էջմիածնի Ավետարանի խորանների ծաղկող Հովհաննես գրիչն է, և որ Բղենո նորավանքում էջմիածնի Ավետարանից, նրա նախագաղափար օրինակից կամ հետագայի ընդօրինակությունից են կատարվել և հմր 9430 ձեռագրի խորանները:

Ամփոփելով գիտաժողովը Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Սեն Արևշատյանն ասաց, որ այս թեմաները, ներկայացնելով Մատենադարանում կատարվող ուսումնասիրությունների ուղղությունները, ունեն և մի ներքին խորհուրդ, որովհետև արտացոլում էին նաև Լևոն Խաչիկյանի գիտական հետաքրքրությունների ընդգրկուն շրջանակը:

Վ. Դ. Դեվրիկյան,